ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1962 Общественные науки

Ռ. Գ. Սահակյան

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՍՈՎԵՏԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հետպատերազմյան տարիներին թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների հրատարակած բազմաթիվ աշխատություններում, պատմության դասագրքերում ու մենագրային բնույթի գրականության մեջ մեծ տեղ է հատկացված երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հարցերին, որոնք քննարկվում են գերազանցապես սովետա-թուրքական հարաբերությունների տեսանկյունից։ Թուրք հեղինակների հետապնդած հիմնական նպատակն է «ապացուցել», թե Թուրքիան երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում՝ ինչպես 1939—1941 թթ., այնպես էլ ՍՍՌՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից ընդհուպ մինչև Հայրենական Մեծ պատերազմի վերջը Սովետական Միության նկատմամբ վարել է միանգամայն լոյալ, անկեղծ քաղաքականություն և մինչև վերջը հավատարիմ է մնացել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորություններին։ Դեռ ավելին. թուրք պատմաբանները պնդում են, որ պատերազմի տարիներին Թուրքիայի գրաված «չեզոք» դիրքը մեծապես օգնել է Սովետական Միությանը և նպաստել Հայրենական Մեծ պատերազմում սրա ձեռք բերած համաշխարհային պատմական հաղթանակին։ Այսպես, թուրք պատմաբան Յահյա Օկչուն «Թուրք-ռուսական պատերազմների պատմությունը» խորագիրը կրող գրքում հատուկ գլուխ է հատկացրել «Ռուսական հաղթանակին թուրքերի ցույց տված օգնությանը» *(ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։ Հակասովետական ոգով գրված և մինչև վերջը հակագիտական այս աշխատության մեջ հեղինակը պատմական իրականության խեղաթյուրումը հասցրել է այն աստիճանի, որ 2-րդ համաշխարհային պատերազմը համարում է ոչ ավելի, ոչ պակաս, քան «բոլշևիկյան ղեկավարների ստեղծագործությունը» և պնդում, թե նրանք «լուրջ և իսկական խաղաղություն հաստատելու նպատակ չունեին» և այդ պատճառով «խաղաղությանը անկեղծորեն ձգտող» Արևմուտքի հետ ճակատ չկազմեցին[1]։*

Թուրք հեղինակների աշխատություններում խեղաթյուրվում են 1939 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Մոսկվայում տեղի ունեցած սովետա-թուրքական բանակցությունները։ Դրանց ձախողման մեղքը թուրք պատմաբանները փորձում են բարդել Սովետական Միության վրա[2], միաբերան աղմը-

[1] Yahya Okçu, Türk-Rus mücadelesi tarihi. Ankara, 1949, s. 197.

[2] *Տե՛ս* Yahya Okçu, s. 189; Prof. Dr. Coşkun Uçok, Siyasî tarih dersleri. Ankara, 1957, s. 377; Dr. Ahmet Şükrü Esmer, Siyasî Tarih (1919—1939). Ankara, 1953, s. 255; A. Halûk Ülman, Türk-Sovyet münasebetleri (1923—1960). „Forum", 15 Ağustos 1960, sayı 153, s. 10; Tahsin Ünal, 1700 den 1958e kadar Türk siyasî tarih. Ankara, 1958, s. 297; Prof. Enver Ziya Karal, Türkiye Cümhuriyeti tarihi (1918—1953). Istanbul, 1958, s. 211.

կելով այն մասին, թե 1939 թ. Մոսկվայի բանակցությունների ժամանակ Սովետական կառավարությունը ձգտում էր վերադառնալ նեղուցների հարցում ցարիզմի վարած իմպերիալիստական քաղաքականությանը, նեղուցների վրա հսկողություն հաստատել և այլն։ «Սարաջօղլուի ուղևորությունը,—գրում է Քըլըջը,—ակներև դարձրեց, որ ՍՍՌՄ-ը մտադիր չէր բարի կամքի վրա հիմնված համաձայնագիր ստորագրել»[3]։

Ուրիշները (պրոֆ. Էսմեր, պրոֆեսոր Ուչոկ, Մյուքերրեմ Քյամիլ Սու, Քարփաթ) Սովետական Միությանը մեղադրում են երկդիմի քաղաքականության մեջ, մինչդեռ Թուրքիան, նրանց կարծիքով, Մոսկվայի բանակցությունների ժամանակ շիտակ և անկեղծ առաջարկներով հանդես եկավ։

Այժմ տեսնենք, թե իրականում ինչպե՞ս են ընթացել 1939 թ. սովետա-թուրքական բանակցությունները, ի՞նչ նպատակներ էին հետապնդում բանակցող կողմերը։

Ինչպես հայտնի է, 1939 թ. մարտին Մոսկվայում սկսված անգլո-ֆրանս-սովետական բանակցությունների ժամանակ ակնհայտ դարձավ Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստական շրջանների մտադրությունը՝ հասկացնել ֆաշիստական Գերմանիային, որ իրենք ամենևին էլ չեն պատրաստվում ռազմական դաշինք կնքել ՍՍՌՄ-ի հետ։ Լոնդոնում գերմանական դեսպան Դիրքսենը իր կառավարությանը ներկայացրած գաղտնի զեկուցագրում հաղորդում էր, որ արևմտյան տերությունների կողմից այդ բանակցությունները նպատակ ունեն «որոշել Սովետական Բանակի մարտունակությունը» և ոչ թե օպերատիվ համաձայնագրեր կնքել[4]։

Սովետական կառավարությունը հսկայական եռանդ գործադրեց, որպեսզի արևմտյան տերությունները և առաջին հերթին Անգլիան ու Ֆրանսիան մասնակցեն հիտլերյան ագրեսիայի դեմ բոլոր ջանքերի միավորմանը։ Սակայն վերջիններս, իրենց հակասովետական ձգտումներով տարված, ընդհակառակը, նպաստեցին գերմանական ֆաշիզմի իմպերիալիստական պլաններին՝ դիտավորյալ կերպով ձախողելով 1939 թ. մարտ-հուլիս ամիսների Մոսկվայի բանակցությունները։

Ինչպես նշվում է «Պատմության կեղծարարները» պատմական տեղեկանքում, «Անգլիան ու Ֆրանսիան ԱՄՆ-ի կառավարող շրջանների պաշտպանությամբ, 1939 թ. դարնան ու ամռան ճակատագրական ժամանակաշրջանում, երբ պատերազմը կանգնել էր դռան շեմքին, շարունակում էին իրենց քաղաքական նախկին գիծը։ Դա հիտլերյան Գերմանիային պրովոկացիոն կերպով Սովետական Միության դեմ լարելու քաղաքականություն էր, որ խաբեության համար քողարկված էր ոչ միայն Սովետական Միության հետ համագործակցելու փարիսեցիական ֆրազներով, այլև ինչ-որ ոչ-բարդ դիվանագիտական մանևրներով, որոնք կոչված էին ժողովուրդների հասարակական կարծիքին թաքցնելու անցկացվող քաղաքական կուրսի իսկական բնույթը»[5]։

Վերջնականապես համոզվելով, որ արևմտյան տերությունները մտադիր չեն ՍՍՌՄ-ի հետ որևէ համաձայնագիր կնքել գերմանական ագրեսիայի դեմ,

---

[3] Allemur Kilic, Turkey and the World. Washington, 1959, p. 79.

[4] «Документы и материалы кануна второй мировой войны», т. II. Госполитиздат, М., 1948, д. № 21, стр 117.

[5] «Պատմության կեղծարարները» (պատմական տեղեկանք), Հայպետհրատ, Երևան, 1948, էջ 35—36։

Սովետական Միությունը, ելնելով իր անվտանգությունն ապահովելու ու երկրի պաշտպանունակությունը ամրացնելու շահերից, ստիպված էր 1939 թ. օգոստոսի 23-ին չհարձակման պակտ ստորագրել Գերմանիայի հետ։ Դրանով իսկ ձախողվեց արևմտյան տերությունների հետապնդած հիմնական նպատակը՝ հիտլերյան ագրեսիան ուղղել դեպի արևելք՝ ՍՍՌՄ-ի դեմ։

1939 թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա։ Անգլիան ու Ֆրանսիան անմիջապես պատերազմ հայտարարեցին Գերմանիային և այդպիսով մարդկությունը ներգրավվեց համաշխարհային երկրորդ պատերազմի մեջ։ Դեպքերի նման ընթացքը, ինչ խոսք, բոլորովին ձեռնտու չէր արևմտյան իմպերիալիստական տերություններին, նրանց խաղաթղթերը խառնվեցին։ Սակայն Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջանները դրանից հետո էլ չհրաժարվեցին իրենց հակասովետական պլաններից։ Արևմտյան դիվանագիտությունը փորձեց «մյունխենյան գործարքը» մի այլ ձևով կրկնել օգտագործելով Թուրքիային։ 1939 թ. սեպտեմբերի 25-ին ՍՍՌՄ-ի հետ փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ վարելու համար Մոսկվա ժամանեց Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Շ. Սարաջօղլուն։ Ինչպես հետագայում հաստատվեց, անգլիական դիվանագիտությունը նպատակադրվել էր Սովետական Միության ու Գերմանիայի միջև անհապաղ զինված ընդհարում առաջ բերել զուգահեռ պակտերի սիստեմի օգնությամբ՝ սովետա-թուրքական և անգլո-ֆրանս-թուրքական։ Նախքան Սարաջօղլուի Մոսկվա գալը արդեն ստորագրվել էին փոխադարձ օգնության պայմանագրեր մի կողմից Անգլիայի ու Թուրքիայի (1939 թ. մայիսի 12-ին) և մյուս կողմից Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև (1939 թ. հունիսի 23-ին)։ Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև պատերազմական վիճակի առկայության պայմաններում Թուրքիայի ու ՍՍՌՄ-ի միջև փոխադարձ օգնության պայմանագրի ստորագրումը անխուսափելիորեն զինված ընդհարում առաջ կբերեր Սովետական Միության ու Գերմանիայի միջև, այսինքն հենց այն, ինչի ձգտում էին ագրեսիայի սանձազերծման գլխավոր հրահրողները՝ Անգլիան ու Ֆրանսիան, ինչպես նաև Թուրքիան։

Սովետական կառավարությունը ժամանակին և ճիշտ կռահեց անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտության այդ նոր քայլը։ Նա Թուրքիային առաջարկեց կնքել փոխադարձ օգնության վերաբերյալ երկկողմանի պակտ, որը պիտի սահմանափակվեր Սև ծովի և նեղուցների շրջաններով, գտնելով, որ այդպիսի պայմանագրի ստորագրումը չի կարող ՍՍՌՄ-ին մղել այնպիսի գործողությունների, որոնց հետևանքով նա կներգրավվեր զինված ընդհարման մեջ՝ Գերմանիայի հետ։ Երկրորդ առաջարկությունը, որով Սովետական Միությունը հանդես եկավ Մոսկվայի բանակցությունների ժամանակ, դա այն էր, որ ՍՍՌՄ-ը Թուրքիայից երաշխիք էր պահանջում, որ պատերազմի սպառնալիքի դեպքում վերջինս ոչ-սևծովյան տերությունների ռազմանավերին թույլ չի տա անցնել Բոսֆորը և մտնել Սև ծովը։ Թուրքական պատվիրակությունը մերժեց ՍՍՌՄ-ի այս երկու վերապահումներն էլ «և այդպիսով պակտի կնքումն անհնարին դարձրեց»[6]։

Ինչպես տեսնում ենք 1939 թ. սովետա-թուրքական բանակցությունները

---

[6] Доклад Председателя Совнаркома СССР на внеочередной сессии Верховного Совета СССР первого созыва. «Известия», 1. XI 1939.

ձախողվեցին ամենևին ոչ Սովետական Միության մեղքով, մի բան, որ փորձում են «հաստատել» թուրք պատմաբանները։ Դրանց ձախողման պատճառը հենց Թուրքիայի դրված դիրքն էր։

Պետք է ասել, որ թուրք հեղինակների այն հերյուրանքը, թե իբր Սովետական Միությունը բանակցությունների ժամանակ պահանջում էր վերանայել նեղուցների ռեժիմի վերաբերյալ 1936 թ. Մոնտրեում կնքված միջազգային կոնվենցիան՝, համառորեն շրջում էր արտասահմանյան մամուլի էջերում դեռևս այն ժամանակ՝ բանակցություններից անմիջապես հետո։ Սարաջօղլուի վերադարձից հետո արևմտյան թերթերը աղմուկ բարձրացրին ՍՍՌՄ-ի դեմ՝ վերջինիս մեղադրելով նեղուցների հարցում արտոնյալ իրավունքներ պահանջելու և Մոնտրեի կոնվենցիան հօգուտ իրեն վերանայելու մեջ։ Սովետական կառավարությունը վճռականորեն հերքեց արտասահմանյան մամուլի հերթական այդ զրպարտությունը, որակելով այն որպես «հերյուրանք և կեղծիք»[8]։

Սարաջօղլուի Մոսկվա կատարած ուղևորության հետ կապված Արևմուտքի տերությունների հակասովետական մտադրություններն ակներև դարձան անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի ստորագրությամբ։

1939 թ. հոկտեմբերի 19-ին, չսպասելով նույնիսկ իր արտաքին գործերի մինիստրի վերադարձին (երբ նա դեռ ճանապարհին էր), թուրքական կառավարությունը Անկարայում Անգլիայի ու Ֆրանսիայի հետ ստորագրեց փոխադարձ օգնության պայմանագիր, որը նախատեսում էր.

1. Օգնություն Թուրքիային Անգլիայի և Ֆրանսիայի կողմից այն դեպքում, «եթե Թուրքիան ներգրավվի պատերազմական գործողությունների մեջ եվրոպական տերության հետ՝ այդ տերության կողմից Թուրքիայի դեմ կատարած ագրեսիայի հետևանքով»։

2. Օգնություն Թուրքիայի կողմից այն դեպքում, «եթե եվրոպական տերության կողմից կատարված ագրեսիայի ակտը հանգեցնի պատերազմի Միջերկրական ծովի գոտում, որտեղ կներգրավվեն Ֆրանսիան և Միացյալ Թագավորությունը» և, միաժամանակ, օգնություն Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, «եթե եվրոպական տերության կողմից կատարված ագրեսիայի ակտը հանգեցնի պատերազմի Միջերկրական ծովի գոտում, որտեղ կներգրավվի Թուրքիան» և այլն[9]։

Անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի հակասովետական ուղղվածության մասին դժվար չէր կռահել Ազգային մեծ ժողովում Թուրքական Ռեսպուբլիկայի պրեզիդենտ Իսմեթ Ինոնյուի արտասանած ճառից։ Ելույթ ունենալով հերթական սեսիայի բացման օրը՝ 1939 թ. նոյեմբերի 1-ին Ինոնյուն հայտարարեց, որ այդ «պակտը ծառայում է խաղաղության գործին մեր (այսինքն թուրքական—Ռ. Ս.) շահերի գոտում»։ Այլ կերպ ասած, Թուրքիայի կառավարող շրջանները հասկացնել էին տալիս, որ նրանք ոչինչ չունեն այն բանի դեմ, եթե ֆաշիստական ագրեսիան ուղղվի դեպի այնպիսի «գոտիներ», որոնց վրա անգլո-ֆրանսիական երաշխիքները չեն տարածվում, այսինքն՝ Սովետական Միության դեմ։

---

[7] Տե՛ս Kemal Karpat, Turkey's Politics. Washington, 1959, p. 351; Ahmet Şükrü Esmer, s. 255.

[8] «Известия», 1. XI. 1939.

[9] Տե՛ս «Дипл. словарь», т. I. М., 1948, стр. 137

Թուրքիայի ղեկավար շրջանների պրոֆաշիստական քաղաքականությունն ավելի ցայտուն դրսևորվեց Հայրենական Մեծ պատերազմին նախորդող վերջին ամիսներին։ Ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից հետո Սովետական Բանակի ձեռքն ընկած Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերը բացահայտորեն մերկացնում են թուրքական կառավարողների նենգ քաղաքականությունը ՍՍՌՄ-ի նկատմամբ՝ նախքան Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակվելը։ Այսպես, Բեռլին ուղարկած գաղտնի հաղորդագրություններից մեկում, որը վերաբերում է 1941 թ. մայիսի 14-ին, Անկարայում գերմանական դեսպան ֆոն Պապենը Գերմանիայում արտաքին գործերի մինիստր Ռիբբենտրոպին տեղեկացնում էր Թուրքիայի պրեզիդենտի հետ ունեցած իր զրույցի մասին, որի ժամանակ վերջինս հայտարարել էր, որ «Թուրքիան պատրաստ է իր վրա պարտավորություն վերցնել երբեք ոչինչ չձեռնարկել ընդդեմ Գերմանիայի և նրա հետ կոնֆլիկտի մեջ չմտնել»[10]։

Մի այլ փաստաթղթից երևում է, թե ինչպիսի ստոր նպատակների պետք է ծառայեր Թուրքիան գերմանացիների պատերազմական ծրագրերում։ Նույն մայիս ամսին Պապենին ուղարկած հեռագրում գերմանական կառավարությունը հայտնում էր նրան, որ «Թուրքիայի հետ պաշտոնական պայմանագիր կնքելու հետ մեկտեղ, կկնքվի նաև գաղտնի պայմանագիր, որը հնարավորություն կտա մեզ Թուրքիայի վրայով տեղափոխելու անսահմանափակ քանակությամբ զենք և զինանյութեր...»։ Հեռագրում ասվում էր, որ այդ բոլորին հարկավոր է այնպիսի տեսք տալ, որ գործնականում հնարավոր դառնար զենքի հետ միասին տեղափոխել նաև որոշ քանակությամբ զորք՝ քողարկված ձևով[11]։

Գերմանացիներին այնքան անհրաժեշտ այդ պայմանագիրն իրեն երկար սպասեցնել չտվեց։ 1941 թ. հունիսի 18-ին, այսինքն Սովետական Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից 4 օր առաջ, Թուրքիայի ու Գերմանիայի միջև ստորագրվեց պայմանագիր «բարեկամության ու չհարձակման մասին»։ Կնքելով այդ պայմանագիրը, Թուրքիան կոպիտ կերպով խախտեց 1929 թ. դեկտեմբերի 17-ին Անկարայում ստորագրված սովետա-թուրքական արձանագրությունը, որի 2-րդ հոդվածը պայմանավորվող կողմերին պարտավորեցնում էր իրար տեղյակ պահել այլ պետությունների հետ քաղաքական պայմանագրեր կնքելու մասին և առանց մյուս կողմի համաձայնության այդպիսիք չստորագրել։ Գերմանա-թուրքական պայմանագիրը մեծ ծառայություն մատուցեց հիտլերյան Գերմանիային։ Անվտանգելով ֆաշիստական զորքերի բալկանյան թևը, այն հանդիսացավ Գերմանիայի կողմից ՍՍՌՄ-ի դեմ պատերազմի նախապատրաստման վերջին օղակը։ Միաժամանակ, այդ պայմանագրի ստորագրումով Թուրքիան բացահայտորեն ցույց տվեց, որ նա միանում է ֆաշիստական Գերմանիայի հակասովետական պլաններին։ «Գերմանա-թուրքական պայմանագիրը հեշտացրեց ՍՍՌՄ-ի վրա

---

10 «Документы министерства иностранных дел Германии», вып. 2. Германская политика в Турции (1941—1943 гг.), Госполитиздат, М., 1946, стр. 8.

11 Նույն տեղում, էջ 11—12։

Գերմանիայի հարձակումը և նրան հնարավորություն տվեց Թուրքիայի ձևական չեզոքությունն օգտագործել ի վնաս ՍՍՌՄ-ի և ազատասեր այլ ժողովուրդների շահերի...»[12]։ ՍՍՌՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից հետո Թուրքիայի ղեկավար շրջանները չհապաղեցին իրենց գոհունակությունը հայտնելու գերմանա-թուրքական պայմանագրի «արդյունքների» վերաբերյալ։ 1941 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բացման առթիվ արտասանած իր ճառում Թուրքիայի պրեզիդենտն ընդգծեց, որ 1941 թ. հունիսի 18-ի պայմանագիրը «փոխադարձ վստահության մթնոլորտ ստեղծեց»։ «Այս արդյունքը ես ցանկանում եմ գոհունակությամբ նշել... Այդ ժամանակից ի վեր թուրք-գերմանական հարաբերությունները ոչ մի ժամանակ չփչանալով ընթանում են բարեկամության ուղիով»։ Վերջում պրեզիդենտը վստահություն էր հայտնում, որ բարեկամության ու չեզոքության պայմանագիրը բոլոր հանգամանքներում շարունակում է և կշարունակի ուժի մեջ մնալ[13]։

Ժամանակակից թուրք պատմաբան պրոֆեսոր Ուչոկը, իր «Քաղաքական պատմության» մեջ փորձելով «հիմնավորել» իր այն կարծիքը, թե իբր 1941 թ. հունիսի 18-ի պայմանագրով Թուրքիան «լրիվ չեզոք մի դիրք գրավեց», ակամայից մերկացնում է այդ չեզոքության իսկական իմաստը։ «Գերմանիան էլ հենց այդ էր ուզում»,—գրում է նա։ «Թուրքիայի չեզոքության դեպքում,—բացատրում է իր միտքը հեղինակը,—պատերազմող պետությունների ռազմանավերը չէին անցնի նեղուցներով և Սովետներին օգնություն ցույց չէին տա»[14]։

Անդրադառնանք այսպես կոչված «թուրքական չեզոքությանը» երկրորդ համաշխարհային պատերազմում։ Այս հարցի քննության հարկ կա այն պատճառով, որ չնայած հետպատերազմյան տարիներին հրապարակված գաղտնի փաստաթղթերին, որոնք համոզիչ կերպով համաշխարհային հասարակական կարծիքի առջև մերկացրին Թուրքիայի «չեզոք» քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ժամանակակից Թուրքիայում լույս տեսնող պատմական գրականության մեջ անվերապահորեն արդարացվում և նույնիսկ փառաբանվում են Թուրքիայի «չեզոք» քաղաքականությունն ու նրա «դերը» մարդկության ընդհանուր հաղթանակի գործում։

1941 թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Սովետական Միության վրա։ Երեք օր հետո, հունիսի 25-ին թուրքական կառավարությունը Մոսկվայում իր դեսպանի միջոցով տեղեկացրեց, որ «Գերմանիայի ու ՍՍՌՄ-ի միջև պատերազմով ստեղծված դրության առկայությամբ Ռեսպուբլիկայի կառավարությունը որոշել է հռչակել Թուրքիայի չեզոքությունը»[15]։ Շատ չանցած, թուրքական պաշտոնական «Ուլուս» թերթը 1941 թ. հոկտեմբերի 5-ի համարում առանց իր հրճվանքը թաքցնելու գրում էր. «Գերմանացիները բացարձակապես ճիշտ վարվեցին՝

---

[12] «Дипломатический словарь в трех томах», т. I, Госполитиздат, М., 1960, стр. 368—369.

[13] Inonü diyor ki, Nutuk, hitabe, beyanat, hasbihaller. Istanbul, 1944, s. 103.

[14] Prof. Dr. Coşkun Uçok, Siyasî tarih dersleri. Ankara, 1957, s. 378.

[15] «Внешняя политика Советского Союза в период Великой Отечественной войны», т. I, Госполитиздат, М., 1946, стр. 129.

հարձակում գործելով Սովետների վրա»[16]։ Հայրենական պատերազմի արդեն առաջին ամիսներից սկսած Թուրքական կառավարող շրջանները «չեզոքության» քողի տակ թաքնվելով, սկսեցին ակտիվ աջակցություն ցույց տալ «առանցքի» երկրներին։ 1941 թ. հուլիսի 9-ին Թուրքական կառավարությունը կոպիտ կերպով խախտելով 1936 թ. Մոնտրեի կոնվենցիան, գերմանական «Զենֆալկե» ռազմանավին թույլատրեց անցնել նեղուցներով և մտնել Սև ծովը, իսկ օգոստոսին նույն ձևով Սև ծովում երևաց ֆաշիստական Իտալիայի «Տարվիզիո» ռազմանավը»[17]։ Թուրքիայի այդ պրոֆաշիստական դիրքը հակահիտլերյան կոալիցիայի մասնակիցներին՝ Սովետական Միությանն ու Անգլիային ստիպեց 1941 թ. օգոստոսի 10-ին իրենց նույնանման նոտաներում «հիշեցնել» Թուրքական կառավարությանը նեղուցների ռեժիմի վերաբերյալ կոնվենցիան պահպանելու անհրաժեշտության մասին։ Սակայն Թուրքական ղեկավարները ամենևին էլ մտադիր չէին հետևելու չեզոքության քաղաքականությանը։ Ընդհակառակը, ընդհուպ մինչև պատերազմի վերջը նրանք հավատարիմ մնացին իրենց խոստմանը՝ «ոչինչ չձեռնարկել ի վնաս Գերմանիայի շահերի»։ Սովետական կառավարությունը բազմիցս մատնանշել է պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից նեղուցների ռեժիմի խախտման դեպքերի մասին։

Այսպես, 1942 թ. նոյեմբերի 4-ի իր նոտայում Սովետական կառավարությունը նորից Թուրքիայի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Գերմանիան մտադիր է առևտրական նավերի քողի տակ Սև ծովն անցկացնել օժանդակ ռազմանավեր 140 տ ընդհանուր ջրատարողությամբ և նախազգուշացրեց, որ այդ նավերի բաց թողումը նեղուցներով կհանդիսանար Մոնտրեի կոնվենցիայի կոպիտ խախտում։ Թուրքական կառավարությունը, սակայն, թույլատրեց գերմանական այդ նավերին անցնել նեղուցներով և մտնել Սև ծովը։ 1944 թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան նեղուցներով գերմանական ռազմանավերի անցման մի քանի դեպքեր։ Սովետական կառավարությունը բողոք հայտնեց Թուրքական կառավարությանս այն բանի դեմ, որ վերջինս թույլատրել է գերմանական ռազմական և ռազմա-օժանդակ նավերին անցնել Սև ծովից Էգեյան ծովը։ Դրանք «Էմս» և «Կրիգստրանսպորտ» տիպի տարբեր տոննաժ ունեցող այն 13 նավերն էին, որոնք մասնակցում էին ռազմածովային օպերացիաներին Սև ծովում։ Պատերազմի տարիներին նեղուցների ռեժիմի խախտման բազմաթիվ այլ դեպքեր են եղել, որոնց մասին Սովետական կառավարությունը հայտնել է 1946 թ. օգոստոսի 7-ի և սեպտեմբերի 24-ի իր նոտաներում։ Հայտնի է, որ Թուրքական կառավարությունն ըստ էության չի կարողացել հերքել սովետական նոտաներում բերված փաստերից և ոչ մեկը։

Ժամանակակից Թուրք պատմաբաններն, արհամարհելով ոչ հեռավոր անցյալի փաստերը, ձգտում են ամենադրական կողմերից ներկայացնել Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականությունը նեղուցների հարցում։ Վերջերս Թուրքիայում լույս տեսած «Նոր Թուրքիան» վերնագիրը կրող գրքում, որն, ի դեպ, հրատարակվել է Ռոկֆելլերի ֆոնդի գումարների օգնու-

---

[16] Տե՛ս С. Устюнгель. В тюрьме и на «воле». Перевод с турецкого, Гос. изд иностр. лит., М., 1952, стр. 76.

[17] Տե՛ս «Правда», 14. VIII 1946.

թյամբ, պրոֆ. Էսմերը Թուրքիայի դիվանագիտությանը նվիրված իր մեծածավալ հոդվածում անվերապահորեն արդարացնելով պատերազմի տարիներին Թուրքիայի վարած «չեզոք» քաղաքականությունը, փորձում է «պատճառաբանել» վերջինիս կողմից նեղուցների ռեժիմի խախտման դեպքերը։ Այսպես, հիշատակելով 1944 թ. ապրիլի 20-ին գերմանական նավերի՝ նեղուցներով դեպի Ռումինիա անցնելու դեպքը, հեղինակը պնդում է, որ իբր Թուրքական կառավարությունը տեղյակ չէր այդ նավերի վրա սպառազինություն լինելու մասին[18]։ Իսկ վերը հիշված Քըլըջը գրում է. «Չնայած պրոգերմանական ու պանթուրանական կլիկների գործունեությանը և Մենեմենջիօղլուի (Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը—Ռ. Ս.) ու Սարաջօղլուի բավականին անզգույշ գրույցներին, թուրքական չեզոքությունը, ամբողջությամբ վերցրած, կոռեկտ էր և ոչ ի վնաս դաշնակիցների... նրա կողմից նեղուցների պաշտպանությունը ճիշտ էր, ասենք որևէ, բշնամական հետևանքի Սովետական Ռուսաստանի նկատմամբ»[19] (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։ Հեղինակը փորձում է ժխտել Թուրքիայի կողմից նեղուցների ռեժիմի խախտման բազմաթիվ դեպքերը, պնդելով, որ ՍՍՌՄ-ի վրա գերմանացիների հարձակումից հետո Թուրքիան «կտրուկ կերպով մերժեց ճանապարհ տալու և նա գերմանական ու իտալական ոչ մի նավի թույլ չի տվել Միջերկրականից անցնել Սև ծովը»[20]։ Իսկ Մյուքքերեմ Քյամիլ Սուն և Քյամիլ Սուն լրիվ արդարացնելով պատերազմի բոլոր տարիներին Թուրքիայի կառավարող շրջանների վարած «չեզոք» քաղաքականությունը, միաժամանակ շեշտում են Թուրքիայի «պոզիտիվ» դերը։ «Երկրորդ համաշխարհային պատերազմում,—գրում են նրանք,—թուրքական կառավարության չեզոքությունից Սովետական Միությունը օգուտ քաղեց»[21]։

«Թուրքիայի չեզոքությունը Ռուսաստանին անվտանգություն ապահովեց նեղուցների ու Անատոլիայի կողմից»[22],—եզրակացնում են հեղինակները։

Թե ինչպես էր Թուրքիան ապահովում Ռուսաստանի անվտանգությունը Սև ծովի շրջանում, թույլ տալով գերմանական նավերին մտնել Սև ծովը և ավազակային հարձակումներ գործել ՍՍՌՄ սևծովյան նավահանգիստների վրա, վերևում ցույց տրվեց։ Այժմ տեսնենք, թե ինչպիսի «անվտանգություն» էր ներկայացնում Թուրքիան Անատոլիայի կողմից։

Քաջ հայտնի է, որ Թուրքիայի կառավարող շրջանները մինչև Ստալինգրադի ճակատամարտը բացահայտորեն արտահայտում էին իրենց պրոֆաշիստական դիրքորոշումը և ՍՍՌՄ-ի նկատմամբ իրենց անսքող թշնամանքը։ Թուրք ռեակցիոներները անհամբերությամբ սպասում էին Ստալինգրադի անկմանը՝ ՍՍՌՄ-ի վրա հարձակվելու համար։ Սովետա-թուրքական սահմանի մոտ՝ Տրապիզոնի և Խոփայի շրջաններում 1942 թ. ամռանը զգալի թվով թուրքական զորքեր էին կենտրոնացվել։ 1942 թ. օգոստոսի 31-ին թուրքական թերթերը տպագրեցին Սրվասում Սարաջօղլուի արտասանած ճառը, որտեղ նա ասել էր հետևյալը. «Մենք մտադիր չենք բաց թողնել հարմար առիթը՝

[18] Prof. Dr. Ahmet Şükru Esmer, Türk Diplomasisi (1920—1955). „Yeni Türkiye". Istanbul, 1959, s. 93.

[19] Altemur Kılıc, p. 97.

[20] Նույն տեղում, էջ 112։

[21] Mükerrem Kamil Su ve Kamil Su, Türkiye Cumhuriyeti tarihi. Istanbul, 1957, s. 181.

[22] Նույն տեղում։

մի հարվածով վերադարձնելու այն, ինչ մենք կորցրել ենք պարտության տարիներին» (ընդգծումը մերն է.—Ռ. Ս.)[23]։ Հասկանալի է, որ Թուրքիայի այդ թշնամական մտադրությունները, ՍՍՌՄ-ի նկատմամբ նրա հարձակողական պլանները հայտնի էին Սովետական կառավարությանը, որը պատերազմի նույնիսկ ամենադժվարին պահին Կովկասում պահում էր համապատասխան բանակությամբ զորք, որը նա կարող էր հաջողությամբ օգտագործել ֆաշիստական բանակների առաջխաղացման դեմ։

Սակայն Թուրքիայի խարդախ «չեզոքությունը» սովետական զորքերին դամել էր հարավային ճակատում։ Այժմ թուրք հեղինակները ցինիկորեն գրում են «Ռուսաստանին օգնելու», նրա «թիկունքն ապահովելու», «հարձակումից պաշտպանելու» և նման շինծու «իրողություններին» մասին, անհրաժեշտ չհամարելով բացատրել, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, Թուրքիան չհարձակվեց Սովետական Միության վրա։ Արդյոք ա՞յն պատճառով, որ Թուրքիայի ռեակցիոն ղեկավարները համակրում էին ՍՍՌՄ-ի գլխավորությամբ ազատասեր ժողովուրդների մղած ազնիվ պայքարին, թե՞ նրանք որոշել էին հավատարիմ մնալ չհարձակման մասին 1925 թ. սովետա-թուրքական պայմանագրին։ Իհարկե ոչ այդ պատճառներով։

Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերից հայտնի դարձավ, որ Սովետական Միության վրա թուրքական հարձակումը նախատեսվում էր իրականացնել իրանական սարահարթի վրայով՝ Բաքվի ուղղությամբ, ըստ որում Թուրքիայի ղեկավար շրջանները համոզված էին, որ «անգլիացիները Իրանում քիչ թե շատ նշանակալից դիմադրություն ցույց չեն տա»։ Ինչպես պարզվեց «Պրավդա» թերթում 1947 թ. մարտի 27-ին զետեղված նյութերից, ՍՍՌՄ-ի վրա Թուրքիայի հարձակումը նշանակված էր 1942 թ. նոյեմբերին, այն բանից հետո, երբ Բեռլինը կհայտարարեր Ստալինգրադի անկման մասին։

1947 թ. ամերիկյան «PM» թերթը տպագրեց թուրքական կառավարությանն նախկին անդամներից մեկի երկու հոդվածները, որոնցում հեղինակը (որի անունը թերթը չէր հայտնում) մերկացնում էր Թուրքիայի կառավարող շրջանների այսպես կոչված «չեզոքությունը»։ Թուրքական կառավարությունը,—գրում էր նա,—1942 թ. բանակի մոբիլիզացիա անցկացրեց և որոշում ընդունեց թիկունքից հարձակվել ՍՍՌՄ-ի վրա։ Պատերազմի հայտարարումը նշանակված էր 1942 թ. նոյեմբերին։

Ամեն ինչ պատրաստ էր,—շարունակում է հոդվածի հեղինակը,—Թուրքիան պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել Սովետական Միության դեմ, որի հետ նա կապված էր դաշնակցային պայմանագրով», բայց երբ պրեզիդենտը զանգահարեց Պապենին, հայտնելու նրան, որ Գերմանիան նոր դաշնակից է ձեռք բերում, այսինքն, որ Թուրքիան պատերազմի մեջ է մտնում, վերջինս ասաց, որ Ստալինգրադի տակ գերմանական զորքերը դժվարությունների են հանդիպել և սկսել են նահանջել։ Իմանալով այդ մասին, նա այլևս չհայտնեց Պապենին Թուրքիայի իրական մտադրությունները և անհապաղ փոխեց մոբիլիզացիայի մասին տրված իր կարգադրությունը։ «Հետագա իրադարձությունները,—եզրակացնում էր հեղինակը,—ցույց տվեցին, որ Թուրքիան

[23] Տե՛ս С. Устюгель. В тюрьме и на «воле», стр. 77.

բոլոր հիմքերն ուներ Պապենին երախտապարտ լինելու նրա շատախոսության համար...»։ Վերջում Թուրքական կառավարության նախկին անդամը հավաստիացնում էր, որ այդ բոլորը իսկական ճշմարտություն է և որ ինքը «այդ միջադեպին վկա է եղել»[24]։

Նույնիսկ մինչև վերջը հակասովետական ոգով գրված իր գրքում ամերիկյան պատմաբան Այվոր Սփեքթորը խոստովանում է, որ պատերազմի տարիներին և հատկապես Մոսկվայի ու Ստալինգրադի ուղղությամբ գերմանական բանակների առաջխաղացման ժամանակ «պաշտոնապես չեզոք Թուրքերը գերմանացիների հետ սերտ մերձեցման մեջ մտան», իսկ «1942 թվականի վերջին կովկասյան սահմանի վրա զգալի թվով զորք կենտրոնացրեցին և մամուլի սկսած հակասովետական կամպանիան Թուրքիայում հասավ մի նոր բարձրության...»[25]։

Ճիշտ է, Ստալինգրադի տակ գերմանական զորքերի ջախջախումը մի փոքր թուլացրեց Թուրք ռեակցիոներների շովինիստական մոլուցքը, սակայն Թուրքիայի կառավարող շրջանները ամենևին էլ չհրաժարվեցին ֆաշիստական Գերմանիային առաջվա նման աջակցելուց։ 1942 թ. դեկտեմբերին արտաքին գործերի մինիստր Մենեմենջիողլուն «կառավարության անունից և նրա հանձնարարությամբ հաղորդեց Պապենին, որ Թուրքիան իր չեզոքությունից չի հրաժարվի նույնիսկ այն դեպքում, եթե «առանցքը» գտնվի իր կրախի նախօրյակին, այլ ընդհակառակը, նրան կպաշտպանի բոլոր հանգամանքներում...»[26]։

Ստալինգրադի տակ գերմանացիների կրած պարտությունից հետո Թուրքիայի «չեզոքությունը» ավելի մեծ նշանակություն էր ստանում Գերմանիայի համար, որովհետև թուրքական մեկ միլիոնանոց բանակի ներգրավումը պատերազմի մեջ, ինչ խոսք, կարագացներ ֆաշիստական Գերմանիայի պարտությունը։ Թուրքիան, սակայն, շատ հեռու էր ֆաշիստական սպառնալիքի դեմ մարդկության առաջադեմ ուժերի մղվող պայքարին աջակցելուց։ Ընդհակառակը, նա, ճիշտ է, ավելի զգույշ և քողարկված ձևով, շարունակում էր օգնել Գերմանիային ինչով կարող էր ստրատեգիական հումքով և մթերքներով (քրոմի հանք, բամբակ, բուրդ, ծխախոտ և այլն), առևտուր անելով, գերմանական նավերը նեղուցներով բաց թողնելով և այլն։

Այս հարցերը, հասկանալի է, ձեռնտու չլինելու պատճառով, տեղ չեն գտել թուրք պատմաբանների աշխատություններում, գիտակցաբար շրջանցվում են։ Դրա փոխարեն, կոպիտ կերպով խեղաթյուրելով պատմական իրականությունը, թուրք հեղինակները Սովետական կառավարությանը մեղադրում են Թուրքիայի նկատմամբ ագրեսիվ նպատակներ հետապնդելու մեջ։ Այսպես, օրինակ, Յունալը գրում է, որ Ստալինգրադի տակ տարած հաղթանակից հետո հակահարձակման պատրաստվելով «Ռուսաստանը ապագայում իր նպատակները հեշտությամբ իրագործելու համար այժմ արդեն չէր ցանկանում, որ մենք պատերազմի մեջ մտնենք»[27]։ Իսկ որո՞նք էին Ռուսաստանի ագրեսիվ նպա-

---

[24] «Правда», 27. III. 1947.

[25] Ivar Spector, The Soviet Union and the Muslim World 1917—1958. University of Washington Press, 1959, p. 201—202.

[26] «Документы министерства иностранных дел Германии», вып. 2, стр. 133.

[27] Tahsin Ünal, s. 291.

տակները։ Պարզվում է, որ Ռուսաստանը մտադրվել էր «կուլ տալ» Թուրքիային և այդպիսով «պատմական իր նպատակը» հաջողությամբ պսակել։ Հետաքրքիրն այստեղ այն է, որ Յունալը, ի տարբերություն թուրք մյուս հեղինակների, մի փոքր այլ ձևով է ներկայացնում Թուրքիայի «մասնակցությունը» 2-րդ համաշխարհային պատերազմին։ «Ռուսաստանի այդ քաղաքական նպատակը իմանալով,—գրում է Յունալը,—և մեր բարեկամներ Անգլիայի ու Ամերիկայի հիշեցումից հետո մենք 1945 թ. Գերմանիային ու Ճապոնիային պատերազմ հայտարարեցինք և բնական ձևով պատերազմի մեջ մտանք»[28] (ընդգծումը մերն է—Ռ. Ա.)։

Թուրք պատմաբանները անհիմն պարծենկոտությամբ շեշտում են Թուրքիայի «դրական» ներմուծությունը Հայրենական պատերազմում ՍՍՌՄ-ի տարած պատմական հաղթանակի գործում՝ Թուրքիայի «չեզոքությունը» համարելով Ռուսաստանի հաղթանակի գրեթե ամենակարևոր գործոնը։ «Երբ գերմանական բանակները անսպասելի մի հեղեղի նման առաջ էին շարժվում Ռուսաստանում և ռուսները սև օրեր էին ապրում, այդ մոմենտին բոլորովին նոր երկու միլիոն թուրքական սվիններով՝ գերմանացիների կշեռքի նժարին դնելը Ռուսաստանը ընդմիշտ կարող էր ոչնչացնել»—գրում է «պատմաբան» Օկչուն[29]։ Պետք է ասել, որ այս հեղինակը երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության ֆալսիֆիկացիայի գործում գերազանցում է թուրք մյուս պատմաբաններին։ «Ռուս-թուրքական պատերազմների պատմությունը» խորագրով իր գրքում նա փորձում է «հիմնավորել» Թուրքիայի դերը «Ռուսաստանին կործանումից փրկելու» գործում.

«Գերմանական բանակների հարվածների ներքո դեպի մահ գնացող Ռուսաստանին,—ցինիկորեն գրում է նա,—անգլո-սաքսերը և Թուրքիան օգնության շտապեցին... Մարդկության երջանկության գործի համար միավորված այս ազգերը շտապեցին աջակցելու Ռուսաստանին»[30]։ Խեղաթյուրելով փաստերը, հեղինակը պնդում է, որ Ռուսաստանը, ինչպես առաջին համաշխարհային պատերազմում, նորից անզեն, առանց զինամթերքի ու սպառազինության մնաց։ «Միայն հրաշքը կարող էր փրկել Ռուսաստանին»,—գրում է նա։ Այդ հրաշքը, ըստ հեղինակի, անգլո-ամերիկյան ու թուրքական օգնությունն էր[31]։ Սակայն ինչո՞ւմն էր կայանում Թուրքիայի «օգնությունը» Սովետական Միությանը, ինչպե՞ս էր Թուրքիայի «համարձակ չեզոքությունը» (ըստ նրա արտահայտության) ուժեղ հենարան ծառայում Ռուսաստանի համար»։ «Թուրքիայի չեզոքության շնորհիվ,—գրում է Օկչուն,—Բասրայի ու Պարսից ծոցի վրայով Ռուսաստան հոսող օգնության հեղեղը ուժեղացավ, նրա ձախ թևը պաշտպանվեց և Ռուսաստանը հանգիստ անցկացնելով հակահարձակման գործողությունները, պատերազմը շահեց»։ «Այսպիսով,—եզրակացնում է հեղինակը,—Թուրքիան Ռուսաստանը ազատագրողների շարքում դեր է խաղացել»[32] (ընդգծումը մերն է—Ռ. Ա.)։ Պատմության կեղծարարության, փաստերի կոպիտ աղավաղման մեջ «յուրահատուկ» տեղ ունի Ահմեդ Էմին Յալմանը, որը

[28] Tahsin Ünal, s. 291.
[29] Yahya Okçu, s. 190.
[30] Նույն տեղում, էջ 197։
[31] Նույն տեղում։
[32] Նույն տեղում, էջ 198։

հայտնի է որպես ժուռնալիստ և քաղաքական գործիչ, երկար տարիներ մոտ է կանգնած եղել կառավարող շրջաններին։ Ջանալով վեր հանել Թուրքիայի «դրական» դերը 2-րդ համաշխարհային պատերազմում, Յալմանը ԱՄՆ-ում հրատարակված «Իմ ժամանակի Թուրքիան» վերնագիրը կրող մեմուարային բնույթի իր գրքում պնդում է, որ Թուրքիան նույնիսկ «անուղղակիորեն եղել է... Սովետական Ռուսաստանի դաշնակիցը»[33]։

«Թեպետ մենք պատերազմին չէինք մասնակցում,—գրում է Յալմանը,—մենք զենքի տակ էինք պահում մեկ միլիոն մարդ դիմադրելու համար գերմանացիներին, եթե նրանք հարձակվեին Եվրոպայից դեպի Ասիա ու Միջերկրական ծովի շրջանը գնացող ստրատեգիական ուղու վրա... Այսպիսով,—ավարտում է իր կեղծիքը հեղինակը,—մենք պաշտպանել ենք ռուսական բանակների թևերը հարավային Ռուսաստանում...»[34]։ Թուրք հեղինակների նման անհիմն, մինչև վերջը սնանկ պնդումները ոչինչ ընդհանուր չունեն պատմական իրականության անժխտելի փաստերի հետ։ Իսկ փաստերը մերկացնում են Թուրքիայի ռեակցիոն կառավարող շրջանների իսկական նպատակները մեկ միլիոնանոց բանակ պահելու գործում։ Ճիշտ է, թուրք շովինիստներին չվիճակվեց այդ բանակը շարժման մեջ դնել Սովետական Միության դեմ և թուրք պատմաբաններն այժմ, ննդգափոխելով փաստերը, փորձում են «չեզոք» Թուրքիայի կողմից այդպիսի մեծ զորքի առկայությունը կապել անմիջականորեն Ռուսաստանին պաշտպանելու շինծու խնդրի հետ։ Սակայն հրապարակված փաստաթղթերը հիմնովին հերքում են թուրք պատմաբանների այդ կեղծիքը։ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերից հայտնի է, որ սովետա-թուրքական սահմանի մոտ 1942 թ. աշնանը թուրքական զորքերի կենտրոնացումը պայմանավորված էր ֆաշիստական Գերմանիայի ձգտումներին ընդառաջ գնալու ցանկությամբ և, միաժամանակ, ՍՍՌՄ-ի տերիտորիաների նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների փայփայած զավթողական պլաններով։ Դեռևս 1942 թվականի հունվարին Պապենը Ինոնյուի հետ ունեցած զրույցի ժամանակ այն միտքն էր հայտնել, որ երբ գարնանը գերմանական բանակը սկսի Կովկասի վրա ծրագրած իր հարձակումը, գերմանացիների համար «չափազանց մեծ արժեք կունենա թուրքական ուժերի կենտրոնացումը ռուսական սահմանի վրա»[35]։ Նույն փաստաթղթերից երևում է, թե ինչպիսի նպատակներ էին հետապնդում թուրքական կառավարության ամենապատասխանատու ղեկավարները։ 1942 թ. հունվարի 5-ին Պապենը հաղորդում էր Բեռլին Թուրքիայի պրեզիդենտի հետ իր ունեցած «արտակարգ բովանդակալից» զրույցի մասին, որի ժամանակ պրեզիդենտը հավաստիացրել էր, որ «Թուրքիան մնծապես շահագրգռված է ռուսական հսկայի ոչնչացման մեջ»[36]։ Իսկ Սարաջօղլուն պրեմիեր մինիստրի պաշտոնին անցնելու օրը, 1942 թ. օգոստոսի 27-ին նույն Պապենի հետ զրուցելիս ավելի անդգույշ էր արտահայտվում. «Ռուսաստանի ոչնչացումը,—ասել էր նա,—հանդիսանում է ֆյուրերի սխրագործությունը, որին հավասարը կա

---

[33] Ahmed Emin Yalman, Turkey in my Time. Norman, 1956, p. 198.

[34] Նույն տեղում։

[35] «Документы министерства иностранных дел Германии», вып. 2, стр. 58.

[36] Նույն տեղում։

րող է կատարվել հարյուր տարին մեկ անգամ... Ռուսական պրոբլեմը կարող է լուծվել, եթե սպանվի Ռուսաստանում ապրող ռուսների առնվազն կեսը»[37]։ Եվ պատահական չէ, որ թուրքական կառավարող շրջանները պատերազմի տարիներին և հատկապես 1941—42 թթ. խրախուսում և աջակցություն էին ցույց տալիս շովինիստ-պանթուրքիստների հակասովետական գործունեությանը՝ լայն հնարավորություններ ստեղծելով վերջիններիս մոլի շովինիստական, հակասովետական անզուսպ պրոպագանդայի համար։ 1941 թ. նոյեմբերին, ոչ առանց թուրքական կառավարող շրջանների աջակցության, Ստամբուլում կազմակերպվեց թուրքական հակասովետական կենտրոն, որի մեջ մտան սպիտակգվարդիականները և թուրքական ռեակցիայի ամենաշովինիստական մասի ներկայացուցիչները։ Դրանցից էին թուրքական ֆաշիստ գեներալ էրքիլեթը, տխրահռչակ էնվերի եղբայր Նուրի փաշան, Մյուրսել փաշան և ուրիշներ։ Պանթուրքիստները թուրքերեն և գերմաներեն լեզուներով մի շարք թերթեր ու ամսագրեր էին հրատարակում՝ «Թասֆիրի էֆքյար», «Զինարալթը», «Բոզկուրթ», «Բյույուկ դողու» և այլն։ Հիշյալ թերթերն ու ամսագրերը ամենալկտի կերպով պրոպագանդում էին պանթուրքիստական գաղափարները, բացահայտորեն կոչ անելով անհապաղ պատերազմ սկսել Սովետական Միության դեմ։ Հիշյալ հրատարակությունները հանդես էին գալիս պրովոկացիոն հոդվածներով՝ «պատերազմը առաջադիմություն է», «պատերազմը կուլտուրայի տարածման ամենակարևոր միջոցն է» և նման այլ վերնագրերով։ Պանթուրքիստները չէին թաքցնում իրենց զավթողական իղձերը և բացեիրաց գրում էին ՍՍՌՄ-ի հաշվին տերիտորիալ մեծ ձեռքբերումների մասին։ Այսպես, «Բոզկուրթ» ամսագիրը 1941 թ. հուլիսի համարում որպես հավելված «Թուրքիզմը սպասում է» հոդվածի տպագրել էր «Մեծ Թուրքիայի քարտեզը», որի մեջ մտցված էին նաև Անդրկովկասի և Միջին Ասիայի սովետական ռեսպուբլիկաները։ Նույն ամսագրում տպագրված «Բոզկուրթչիների կրեդոն» վերնագիրը կրող հոդվածում պանթուրքիստները անսքող ձևով բացահայտում էին իրենց մոլի շովինիստական ռասայական էությունը։ Ահա այդ զառանցանքը, որը մեջ է բերվում ամերիկյան հեղինակ Հոստլերի գրքում.

«Ովքե՞ր ենք մենք։ Մենք բոզկուրթչիներն ենք։ Ո՞րն է մեր գաղափարախոսությունը։ Բոզկուրթի թուրքիզմը։ Ո՞րն է բոզկուրթչիների հավատը։ Նրանք հավատում են, որ թուրքական ռասան և թուրք ազգը մյուս բոլոր ռասաներից ու ազգերից բարձր են կանգնած։ Ո՞րն է այդ գերազանցության աղբյուրը։ Թուրքականությունը։ Թուրքը մյուսներից բարձր է ծնված օրի՞ց։ Այո, թուրքը բարձր է ի ծնե։ Թուրքն իր խելքը, արիությունը, իր ռազմական հանճարը և ամեն տեսակի ընդունակությունները ստանում է արյունից... Բոզկուրթչիները պանթուրքիստնե՞ր են։ Այո՛։ Բոզկուրթ-թուրքիստների սրբազան նպատակն է թուրքական պետությունը տեսնել 65 միլիոնի հասած...»[38]։ Ամերիկյան գրնդապետ Հոստլերը «Թուրքիզմը և Սովետները» վերնագիրը կրող գրքում արդարացնելով հանդերձ Թուրքիայի կառավարող շրջանների դիրքը պանթուրքիստների գործունեության նկատմամբ, այնուամենայնիվ խոստովանում է, որ «այդ անպատասխանատու խմբերը» թույլատրված էին թուրքական կառավարության կողմից թուրք երիտասարդության գաղափարական նախա-

---

37 Նույն տեղում, էջ 97—98։

38 Charles Warren Hostler, Turkism and the Soviets. London, 1957, p. 181.

պատրաստման նպատակով՝ Սովետական Ռուսաստանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում[39]։ «Կարելի է եզրակացնել,—գրում է հիշյալ հեղինակը,—որ թուրքական պետության մեջ բարձր դիրք գրավող անձինք պատրաստի պլաններ ունեին՝ իրագործելու բոլոր հնարավորությունները, որը դերմանա-սովետական պատերազմում ՍՍՌՄ-ի կործանումը կարող էր ընձեռել պանթուրքիստական դաղափարների իրականացման համար»[40]։ Պետք է ասել, որ թուրք հեղինակները ևս ընդունում են, որ Թուրքիայի կառավարող շրջանները հովանավորում էին պանթուրքիստների գործունեությունը և դադարեցին նրանց պաշտպանել միայն այն ժամանակ, երբ ֆաշիստական Գերմանիայի պարտությունն արդեն կանխորոշված էր։ «Թուրքական կառավարությունը ի վերջո հրաժարվեց ակտիվ աջակցություն ցույց տալ պանթուրքիստական շարժմանը»—գրում է Քարփաթը[41], միաժամանակ բացահայտելով այդ քայլի բուն դրդապատճառները. «կառավարությունը,—շարունակում է հեղինակը,—ուժեղ կերպով ձգտելով ցույց տալ իր չեզոքությունը, փորձեց սանձահարել պանթուրքիստների գործողությունները, թեև դրանք անցյալում կատարվում էին ավելի բացահայտորեն»[42] (ընդգծումները մերն են—Ռ. Ս.)։ Բլըջը, նույնպես ընդունելով կառավարության կապը պանթուրքիստների հետ, փորձում է «մեղմացնել» Թուրքիայի կառավարող շրջանների զավթողական մտադրությունները սովետական տերիտորիաների նկատմամբ։ Կեղծելով իրականությունը, նա հայտարարում է, որ եթե հաշվի առնել Ռուսաստանի «ճնշված թուրքերի» (!) հանդեպ Թուրքիայում տածվող համակրանքը և Սովետական Միության վերահաս պարտությունը, որն այնքան մոտ էր թվում, թուրքական կառավարությանը չի կարելի մեղադրել այն բանում, որ նա որոշ պատրաստություններ էր տեսնում՝ Ռուսաստանին սահմանամերձ թուրքական պրովինցիաների «ապագայի խնդրում ձայն ունենալու համար»[43]։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմում Թուրքիայի «չեզոքությունն» արդարացնելու առիթով թուրք պատմաբաններս ակամայից վեր են հանում ՍՍՌՄ-ի նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների ագրեսիվ պլանները, մի փաստ, որն ինքնին մերկացնում է Թուրքիայի, այսպես կոչված, «չեզոքությունը»։

Հրապարակված գաղտնի փաստաթղթերը վկայում են այն մասին, որ ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից անմիջապես հետո Թուրքական կառավարությունը քննարկում էր ՍՍՌՄ-ի տերիտորիաները հափշտակելու հարցը։ Արդեն 1941 թ. օգոստոսի 5-ին Բեռլին ուղարկած հատուկ հաղորդագրության մեջ Պապենը տեղեկացնում էր, որ «թուրքական կառավարող շրջանները սկսել են ավելի շատ զբաղվել ռուս-թուրքական սահմանից այն կողմը գտնվող իրենց հայրենակիցների ճակատագրով։ Այս շրջաններում հակված են վերադառնալու 1918 թ. դեպքերին և ցանկանում են իրենց միացնել այդ մարզը և հատկապես մեծ արժեք ներկայացնող Բաքվի

---

[39] Charles Warren Hostler, p. 180.

[40] Նույն տեղում, էջ 177։

[41] Kemal Karpat, p. 265.

[42] Նույն տեղում, էջ 267։

[43] Altemur Kilic, p. 112.

նավթահանքերը»[44]։ Վերը հիշատակված Ալթեմուր Քըլըչը իր գրքում նոր հետաքրքիր փաստեր է բերում Թուրքիայի կառավարող շրջանների պանթուրքիստական գործունեության մասին. «Ըստ համաձայնվածության,—գրում է Քըլըչը,—նորից տեղի ունեցան Սարաչօղլուի ու Մենեմենչիօղլուի զրույցները ֆոն Պապենի հետ՝ Ղրիմի և Կովկասի մարզերը կառավարելու պլանների մանրամասնությունների շուրջը»[45]։ Հեղինակը ակամայից բացահայտում է նաև թուրք-գերմանական հակասությունները վերոհիշյալ սովետական տերիտորիաների «ապագա կառավարման» հարցում։ «1943 թ. վերջից,—շարունակում է Քըլըչը,—պանթուրանիզմի կողմնակիցների մեջ հիասթափությունը մեծացավ. միանգամայն պարզ էր դառնում,—եզրակացնում է հեղինակը,— որ թուրք-գերմանական համագործակցությունը սովետա-թուրքական մարզերում գերմանական օկուպացիայի պայմաններում բոլորովին անհնարին է։ Գերմանացիները, չնայած ֆոն Պապենի ակնարկումներին ու թուրքական ղեկավարների հետ ունեցած զրույցներին և չնայած ոչ-պաշտոնական պանթուրանիստական խմբերի գործունեությանը, որոշել էին գրաված մարզերը կառավարել անձամբ, առանց որևէ կողմնակի միջամտության»[46]։

Կոպիտ կերպով խախտելով իր հայտարարած չեզոքությունը, Թուրքիան ոչ միայն բազմակողմանի օգնություն է ցույց տվել ֆաշիստական «առանցքի» երկրներին, այսինքն պատերազմող կողմերից մեկին, այն մոմենտին, երբ նրանք ժամանակավոր հաղթանակներ էին տանում, այլև ջանքեր է գործադրել Գերմանիայի վերջնական ջախջախումն ու անվերապահ կապիտուլյացիան կանխելու համար։ Այսպես, 1943 թ. հունվարի 30—31-ին կայացած Ադանայի կոնֆերանսի ժամանակ, որտեղ Անգլիայի պրեմիեր մինիստր Չերչիլը հանդիպում ունեցավ Թուրքիայի պրեզիդենտի հետ, վերջինս առաջարկել էր անհապաղ համաձայնության հասնել Գերմանիայի հետ և այդպիսով, թույլ չտալ, որ նա լիակատար պարտություն կրի։

«Ինոնյուն փորձեց Չերչիլին ներշնչել պատերազմն անմիջապես վախճանի բերելու անհրաժեշտությունը»—գրում է Քըլըչը։ Ջանալով քողարկել Թուրքիայի կառավարող շրջանների անհանգստությունն ու դժգոհությունը Ստալինգրադի տակ գերմանացիների կրած ծանր պարտությունից, հեղինակը Թուրքիայի նման դիրքորոշումը փորձում է կապել ՍՍՌՄ-ի ուժեղացման հետևանքով իբր ապագայում նրան սպառնացող վտանգի հետ. «Գերմանիայի լրիվ, անվերապահ պարտությունը,—բացատրում է իր միտքը Քըլըչը,—Ռուսաստանին հնարավորություն կտար լուրջ վտանգ դառնալու Թուրքիայի ու Եվրոպայի համար... Սակայն որպես միջնորդ հանդես գալու նրա (Ինոնյուի— Ռ. Ս.) առաջարկությունը մերժվեց։ Չերչիլը պնդում էր, որ ինքը հոռետես չէ Ռուսաստանի մտադրությունների նկատմամբ»[47]։

Թուրք հեղինակի մեջ բերած այս ուշագրավ փաստը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կառավարող շրջանների վարած ռեակցիոն քաղաքականության մի նոր ապացույց է։ Այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհի առաջավոր մարդկությունը կենաց ու մահվան պայքար էր մղում

---

44 «Документы министерства иностранных дел Германии», вып. 2, стр. 34.

45 Altemur Kilic, p. 95.

46 Նույն տեղում, էջ 96։

47 Նույն տեղում, էջ 101։

ֆաշիստական բարբարոսների դեմ, Թուրքիան իր խայտառակ քաղաքականությամբ փորձում էր օգնել ֆաշիզմի պահպանմանը, կանխել նրա լիակատար պարտությունը։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի գրված դիրքին, նրա վարած քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, այդ թվում և իրենց Թուրք հեղինակների աշխատություններում բերված փաստերը, համոզիչ կերպով մերկացնում են ժամանակակից Թուրք պատմագրության մեջ տիրապետող այն կեղծիքը, Թե իբր Թուրքիան երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում վարել է չեզոքության քաղաքականություն և այդ քաղաքականությամբ անգամ աջակցել հակաֆաշիստական ուժերի և առաջին հերթին Սովետական Միության շնորհիվ ձեռք բերված համաշխարհային-պատմական հաղթանակին։

Р. Г. Саакян

Фальсификация советско-турецких отношений в период второй мировой войны в современной турецкой историографии

(Резюме)

В изданной в послевоенные годы в Турции, а также в США исторической и мемуарной литературе, в учебниках по истории республиканской Турции большое место уделено севетско-турецким взаимоотношениям 1939—1945 годов. Турецкие авторы—историки, политические и военные деятели и журналисты крайне тенденциозно освещают советско-турецкие переговоры в Москве в 1939 г., обвиняют Советский Союз в их неудаче. Грубо искажая факты, они утверждают, что якобы Турция за весь период второй мировой войны по отношению к Советскому Союзу вела лойяльную, искреннюю политику и строго придерживалась к своим договорным обязательствам. По их мнению, «абсолютно корректная», «нейтральная» позиция Турции сыграла существенную роль в деле победы Советского Союза в Великой Отечественной войне. Турецкие авторы в своих работах договариваются до того, что считают Турцию «косвенной союзницей России».

На основе опубликованных документов, а также откровенных признаний иностранных в т. ч. отдельных турецких авторов в статье раскрывается и разоблачается господствующая в современной турецкой историографии антинаучная, до конца лживая оценка внешней политики турецких правящих кругов в период второй мировой войны.